ԾՆՈՂ-ԴԵՌԱՀԱՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՃԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՌԱԴԵՐԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

Ավագիմյան Ռ.Ա, Մելքումյան Ա.Գ (ՎՊՀ, Վանաձոր, Հայաստան)
animelqumyan20@mail.ru
Ներկայացման ամս.՝ 31.07.2019
գրախոսման ամս.՝ 07.08.2019
տպագրության ընդունման ամս.՝ 17.09.2019

Հոդվածում քննության է առնվում ծնող-դեռահաս փոխհարաբերությունների ոճերի յուրահատկությունը և դրանց ազդեցությունը սեռադերային նույնականացման, վարքագծի՝ առնականության կամ կանացիության հատկանիշների ձևավորման և դրսևորման գործընթացի վրա:

Հանգուցային բառեր՝ *դեռահաս, սեռադերային նույնականացում, սոցիալական և հոգեբանական ներգործության ոճեր, միջանձնային հարաբերություններ, ծնող-դեռահաս փոխհարաբերություններ:*

Սեռադերային նույնականացման խնդիրը ներկա փոխակերպվող, անցումային հասարակության պայմաններում դարձել է ավելի ակտուալ և պահանջում է շատ մոտեցումներ, լուծումներ, հատկապես կապված սեռադերային ոչ ճիշտ, ոչ նույնական կողմնորոշումների հետ: Սեռադերային ճիշտ, ադեկվատ կողմնորոշումների, արժեքային համակարգերի ձևավորման գործընթացում կարևոր, առաջնային դերը պատկանում է ընտանիքին, ավելի կոնկրետ այն փոխհարաբերության ոճերին, որոնք առկա են ծնողների և երեխաների միջև:

Հետազոտության նպատակն է պարզել ծնող-դեռահաս փոխհարաբերությունների ոճերի ազդեցությունը սեռադերային նույնականացման գործընթացի վրա և դրանց առանձնահատկությունները պայմանավորված գյուղական և քաղաքային ընտանիքներում: Գենդերային ինքնությունը սոցիալական ինքնության հիմնական կառուցվածքի մասն է կազմում, որը բնութագրում է անձին իր պատկանելիության տեսանկյունից: Գենդերային ինքնության հայեցակարգն առաջին անգամ մանրամասնորեն ներկայացրել է Է.Էրիքսոնը: Նրա տեսանկյունից գենդերային ինքնությունը հիմնված է սեփական գոյության իրազեկվածության վրա, ենթադրում է սեփական ես-ի ընկալումը, թույլ է տալիս մարդուն որոշել տարբեր մարդկանց հետ իր նմանությունը: 1980 թվականից ի վեր գենդերային ինքնությունը մեկնաբանվել է որպես անհատի սոցիալական ինքնության ենթակառուցվածքներից մեկը [3, էջ 94-95]:

Սեռային նույնականությունը իրենից ներկայացնում է որոշակի սեռի ներկայացուցիչ լինելու փաստի գիտակցում և վարքի այն սոցիալական ստանդարտների յուրացում, որոնք համապատասխանում են տվյալ սեռին:

Անգելինա Չեկալինան ուղղակի կապ է տեսնում անձի սեռադերային նույնականացման և նրա ինքնիրացման մեջ: Ինքնիրացում ասելով հեղինակը

հասկանում է մարդու կողմից իր անհատական և անձնական հնարավորությունների իրացումը, սեփական ջանքերով կամ այլ մարդկանց հետ փոխգործակցության միջոցով [6, էջ 350]:

Փորձելով հասկանալ այն պատճառները, թե ինչու են մարդիկ շատ դժգոհ իրենցից, կյանքում ունեցած տեղից ու դիրքից, իրենց աշխատանքի արդյունքներից, առհասարակ, փորձելով հասկանալ անձի չբավարարված լինելու պատճառները՝ Չեկալինան հանգում է հետաքրքրիր եզրահանգման: «Մեր կարծիքով,- գրում է հեղինակը,- ինքնաբավարարվածությունը մեծ մասամբ բավարարվածություն է սեփական անձով որպես կին կամ տղամարդ: Սեփական անձի մասին պատկերացումների ամբողջությունը. Ես՝ կնոջ կերպարը կամ տղամարդու կերպարը կազմում է անձի Ես հայեցակարգի կարևոր բաղադրիչ: Այս պատկերացումների համարժեքությունը կամ անհամարժեքությունը, այս կամ այն աֆեկտիվ, անհամապատասխան վերաբերմունքը պատկերացումներին, պատկերացումների ընդունման աստիճանն ազդում են ինքնիրացման ռազմավարության և մարտավարության վրա՝ պայմանավորելով դրանց հաջողությունը» [6, էջ 350]:

Սեռադերային նույնականացման խնդրին անդրադարձել են Լ.Վ.Աստոպովիչը և Լ.Ն. Բելոպալսկան, որոնց փաստմամբ սեռային նույնականացումը հանդիսանում է ինքնագիտակցության ձևավորման կարևոր կողմերից մեկը, որը վերակառուցում է անձի արժեքային կողմնորոշումը և պայմանավորում է նրա զարգացումը: Ծնողները երեխայի նկատմամբ հանդիսանում են գենդերային համայնացման գործակալ [1, էջ 128]:

Ծնող-դեռահաս փոխհարաբերության ոճերից առանձնացվում են հետևյալ հիմնականը դեմոկրատական, ավտորիտար, անտարբեր ոճեր, որոնք էապես ազդում են դեռահասի անձի զարգացման, ծնողների հետ հարաբերությունների և սեռադերային նույնականացման վրա:

1. Դեմոկրատ ծնողներն արժևորում են դեռահասի վարքը, ինքնուրույնությունը և կարգապահությունը: Նրանք իրենք են դեռահասին ինքնուրույն լինելու հնարավորություն ընձեռում իր կյանքի որոշակի ոլորտներում, նրա իրավունքները չոտնահարելով՝ միաժամանակ պահանջում են պարտականությունների կատարում: Ջերմ հարաբերությունների վրա հիմնված հսկողությունը սովորաբար այդքան էլ չի խանգարում դեռահասին: Այսպիսի հարաբերությունների դեպքում չափահասության ձևավորումը տեղի է ունենում առանց կոնֆլիկտների և ապրումների [4, էջ 17-20]:

2. Ավտորիտար ծնողները պահանջում են դեռահասից բացարձակ ենթարկում և չեն գտնում, որ պետք է բացատրեն իրենց արգելքների, ցուցումների պատճառները: Նրանք խիստ վերահսկում են դեռահասի կյանքի բոլոր ոլորտները, ընդ որում կարող են դա անել ոչ այնքան քաղաքավարի: Այսպիսի ընտանիքներում երեխաները սովորաբար փակվում են, և ծնողների հետ նրանց շփումը խախտվում է: Բայց հաճախ ավտորիտար ծնողների երեխաները հարմարվում են ընտանեկան հարաբերությունների ոճին և դառնում անվստահ, պակաս ինքնուրույն և բարոյապես ոչ այնքան հասուն, քան իրենց հասակակիցները՝ օժտված ավելի մեծ

ազատությամբ: Իրավիճակը բարդանում է, եթե բարձր պահանջկոտությունը և հսկողությունը համադրվում են հուզականորեն սառը, մերժողական վերաբերմունքի հետ: Առվել ծանր դեպք է անտարբեր և դաժան ծնողները: Այսպիսի ընտանիքներում երեխաները հազվադեպ են վստահում մարդկանց, շփման մեջ դժվարություններ են ունենում, չեն ընդունում հակառակ սեռին, գերագնահատում են սեփական սեռը, երբեմն դառնում դաժան, բայց ունենում են նաև սիրո ուժեղ պահանջմունք:

3. Անտարբեր ծնողական վերաբերմունքի համադրությունը հսկողության բացակայության հետ նույնպես ընտանեկան հարաբերությունների անբարենպաստ տարբերակ է: Դեռահասին թույլատրվում է անել այն, ինչ նա ուզում է, նրա գործերով ոչ ոք չի հետաքրքրվում: Այսպիսի ամենաթողությունը, կարծես թե, ծնողներին ազատում է երեխաների արարքների հետևանքների պատասխանատվությունից: Իսկ դեռահասները, չնայած երբեմն հակառակվում են, բայց ծնողական հոգատարության, հենարանի կարիք ունեն, նրանք պետք է ունենան մեծահասակի, պատասխանատու վարքի օրինակ, որի վրա էլ կկարողանան կողմնորոշվել: ՈՒստի պարզ երևում է, որ ծնողները և նրանց փոխհարաբերության ոճերը ունեն հակասական ազդեցություն դեռահասի վարքագծի ձևավորման վրա, այդ թվում նրա սեռադերային պատկանելիության զարգացման վրա: Բարձիթողի դեռահասը կարող է շեղվել սեփական սեռին բնորոշ վարքագծից, ինչպես նաև արժեքային համակարգ չձևավորել: Ծնողական սերը միանգամայն անհրաժեշտ, բայց բավարար պայման չէ երեխայի բարենպաստ զարգացման համար: Գերհոգատարությունը՝ դեռահասի նկատմամբ չափազանց վերահսկողությունը՝ հիմնված սերտ հուզական կապի վրա, հանգեցնում է պասիվության, անինքնուրույնության: Գերվերահսկողության սովորաբար հակված են միայնակ մայրերը, ովքեր երեխային համարում են իրենց կյանքի միակ իմաստը [5, էջ 167-170]:

Պարզելու համար ծնող-դեռահաս հարաբերությունների, դաստիարակության ոճերի ազդեցությունը դեռահասների սեռադերային նույնականացման վրա կատարել ենք փորձարարական հետազոտություն գյուղական և քաղաքային դեռահասների շրջանում:

Հետազոտության հիմքում ընկած վարկածը՝ ենթադրվում է, որ դեռահասի սեռադերային նույնականացման գործընթացի վրա էական ազդեցություն է թողնում ծնողների դեռահասների հետ հարաբերությունները և դաստիարակության ոճերը:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են հարցաթերթիկներ և փորձարկված մեթոդիկաներ, մասնավորապես՝ Լ.Ն. Օժիգայովի «Ով եմ ես» հարցաթերթիկը, Սանդրա Բեմի կարծրատիպային վարքագիծն ուսումնասիրող մեթոդիկան, Ս.Ս.Շաֆերի «Ծնող-դեռահաս հարաբերության ոճերն» ուսումնասիրող մեթոդիկան, Ն.Լ.Բելոպալսկայի «Սեռադերային նույնականացումն ուսումնասիրող» մեթոդիկան [2]:

Հետազոտությունն իրականացրել ենք Վանաձորի պետական համալսարանի հենակետային վարժարանում, Տավուշի մարզի Պառավաքար գյուղի Էդ.Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցում և Վարագավան գյուղի միջնակարգ դպրոցում:

Ընտրակազմում ընդգրկվել են 95 փորձարկվողներ, որոնցից 20-ը ՎՊՀ հենակետային վարժարանի Xգ և Xդ դասարաններից դեռահասներ՝ 8 տղա և 12 աղջիկ, 20 դեռահասներ Պառավաքարի Էդ.Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցի VIII և IX դասարաններից՝ 10 տղա և 10 աղջիկ, 10 դեռահասներ Վարագավանի միջնակարգ դպրոցի VII և VIII դասարաններից 4 աղջիկ և 6 տղա: ՎՊՀ հենակետային վարժարանի դեռահասներ ծնողներից 15 ծնող՝ 5 տղամարդ և 10 կին, 20 ծնող՝ 10 կին և 10 տղամարդ մասնակցել են Պառավաքար Էդ. Մելքումյանի անվան միջնակարգ դպրոցից ընտրված դեռահասների ընտանիքից, Վարագավանից մասնակցել են 10 ծնող՝ 6 կին և 4 տղամարդ ընտրված դեռահասների ընտանիքից:

Ս.Ս. Շաֆերի ծնող-դեռահաս փոխհարաբերության ոճերն ուսումնասիրող հարցաշարի կիրառման արդյունքում պարզ դարձավ, որ ծնող դեռահաս հարաբերության ոճերում գերակշռում էր հատկապես ընդունում, վերահսկողություն, համագործակցություն և մերժում:

Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ նորմայից (նորմա է համարվում 6-7 միավորը) բարձրի սահմաններում են գտնվում դեռահասների հետ փոխհարաբերության ոճերից ընդունումը: Միևնույն ժամանակ քաղաքային շրջանում բարձր ցուցանիշի վրա է գտնվում համագործակցությունը և դեռահասի անհաջողության նկատմամբ հետևողական վերաբերմունքը: Գյուղական շրջաններում բարձր ցուցանիշի վրա է գտնվում դեռահասի նկատմամբ վերահսկողությունը, ընդունումը և համագործակցությունը:

Նորմայից ցածրի (6-7 միավորից ցածր) սահմաններում են նրանք, ովքեր ըստ թեստի արդյունքների և համապատասխան բլոկների հավաքել են 6-ից ցածր միավորներ:

Նորմայի սահմաններում են նրանք, ովքեր ըստ փորձարարական վերլուծության արդյունքների հավաքել են 6-7 միավոր:

Հարցման արդյունքներից պարզ դարձավ այն, որ ծնողները, որոնց մոտ երեխայի հետ փոխհարաբերություններում գերակշռում էր ընդունումը, համագործակցությունը և վերահսկողությունը, ապա նրանց երեխաները ունեն իրենց սեռին բնորոշ վարքագիծ: Դեռահաս տղաների համար կարևոր է նմանվել իրենց հայրերին, փորձել լինել այնպիսին ինչպիսին հայրն է պահանջում և միաժամանակ սիրել, հարգել և ընդունել հակառակ սեռին, սկսած իրենց մայրերից, քույրերից և այլն:

Դեռահաս աղջիկների համար կարևոր է կանացիությունը, և որպես կանոն աղջիկների համար տղամարդու վառ օրինակ իդեալ է համարվում հայրը, սակայն եթե նա բացակայում է, ապա այդ դերում հանդես է գալիս բարեկամներից մեկ ուրիշը, օրինակ՝ պապիկը:

Այսպիսով, ձեռք բերված արդյունքները հաստատում են ընտանեկան կազմի և ծնողական վերաբերմունքի տարբերակված ազդեցությունը գենդերային ինքնության ձևավորման վրա: Դեռահասի սեռադերային նույնականացման՝ անձի սոցիալական վարքագծի դրսևորումներում և սոցիալական դերերում մշտապես

առկա է սեռային այն դերերի հետքը, որը նա յուրացրել է ընտանիքում: Դեռահասի սեռադերային նույնականացմանը նպաստող գործոնը ընտանիքում ընտանեկան դերերի բաշխումն է, որից էլ բխում է ընտանիքի առաջնորդին հետևելը (որպես կանոն հայկական ավանդական ընտանիքներում այս դերը պատկանում է ընտանիքի հորը, տղամարդուն) և ընդօրինակելը: Ծնողների փոխհարաբերությունների ազդեցությունը մեծ է դեռահասի սեռադերային սոցիալականացման և սեփական վարքի ձևավորման վրա, որը կարող է լինել դրական և բացասական: Այն առաջանում է ծնողների թույլ տված սխալների հետևանքով, որը դեռահասին տալիս է անձնական վարքի աղավաղված նորմեր, որոնք դեռահասներն ընդօրինակում են և օգտագործում ոչ միայն միջընտանեկան հարաբերությունների շրջանակում, այլ նաև գործնական և միջանձնային շփումներում:

Գրականություն

1 **Астапович Л.В.** Гендерный подход в воспитании личности, Минск, Красико-Принт,2011.-128 с.

2 **Белопольская Н.Л.** Половозрастная идентификация. Методика исследования детского самосознания: Руководство [Электронный ресурс], - М. : Когито-Центр, 2002. с.87

3 **Зимерман Д., Уэст К.,** Создане гендера. Гендерные тетради. Выпуск первый: СПБ. Филиал Института свциологии РАН.СПБ. 1997

4 **Кле М.** «Психология подростка (психосексеуальное развитие) ». М. 1991 г.с.330

5 **Личко А.Е.** «Психопатия и акцентуация характера у подростков» Л. 1983с.126

6 **Чекалина А.А.** Самореализация и гендерная идиентичность человека.//Сб. науч. труд. КГУ.– Краснодар, 2005.

ВЛИЯНИЕ СТИЛЯ ВЗАИМООТНОШЕНИЙ ПОДРОСТОК-РОДИТЕЛЬ НА ПРОЦЕСС ПОЛОРОЛЕВОЙ ИДЕНТИЧНОСТЬ

Авагимян Р.А., Мелкумян А.Г. (Вандзорский государственный университет, Ванадзор, Армения)

Гендерная идентичность подростка в проявлениях социального поведения и социальных ролей человека всегда была следом сексуальных ролей, которые он освоил в своей семье. Влияние родительских взаимодействий велико для социализации подростков и их поведения, которое может быть как позитивным, так и негативным. Это происходит в результате серьезных родительских ошибок, которые дают подростку искаженные правила личного поведения, которые подростки имитируют и используют не только в контексте полового поведений, но также в практических и межличностных отношениях.

Ключевые слова: *подросток, гендерная идентичность, стили социального и психологического воздействия, межличностные отношения, родительско-подростковые отношения.*

INFLUENCE OF THE STYLE OF RELATIONSHIP OF THE TEENAGER-PARENT ON THE PROCESS OF THE SEX-ROLE IDENTITY

Avagimyan R., Melkumyan A. (Vanadzor State University, Vanadzor, Armenia)

Sexual identification of the teenager in the manifestations of a person's social behavior and social roles constantly exists the trace of the sexual roles, which he/she has mastered in the family. The effect of the parents' relationships is high on the sexual socialization of the teenager, as well as on their own behavior, has a huge effect which can be positive and negative. It emerges as a result of parents' serious mistakes, it gives the teenager destructed norms of personal behavior, which the teenagers imitate and use not only within the framework of interfamilial relationships, but also within practical and interpersonal contact.

Keywords*: teenager, sexual identification, styles of social and psychological influence, interpersonal relationships, parent- teenager relationship*